Շաբաթաթերթ՝ հետևյալ 1892 թուականի բանախոսությունները պատմությունից ԱՂԻՒԻ

ամենայն ու ՏՈՒՐՔ շարունակելու:

Նյութերի ստացման ժամանակն է 3—28 և. իսկ Տարբերի ընդունելու 6 րոպէ. առանձին Ն-ը 25 կ. Տարեկան գնաւոր. Ադրեսը կամ Տպարան. իսկ արտասահմանից Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Tarar.

№ 6 Սիրուի 16 փետրուարի ՀԱՅԿ ԱՐՄԱՏ ՏԱՐԻ 892

ԳՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՏԻՔ-ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



Ս. Գուշակի տուած Մուշեղ Մամիկոնեան



Ա. Տիգրանեան

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ

Վ է պ

—Ուրեմն ինչ է հոգդ, պատուելի Նշան։

—Ի՞նչ անեմ, տէր բարեգուէթ, ցաւս մեծ է, մի մեղադրեր զիս աղաչեմ, եթէ առնական ձիւնափայլ ալեաց մէջ կանացի գթոտ սիրտ գաղեալ է և կըբաբախի. կին մարդն իւր վշտաց սփոփանքն իւր թափած արտասուքին կառնու, իսկ այս հանգամանքին մէջ ես կին և, ինչպէս ասացի, հոգևոր ծնող եմ, կարողութենէս վեր է բաց աչքով ականատես գտնուել հոգեհարազատիս ակնյայտնի գայթակղութեանն և կորստին և չըվշտանալ։

Պատուելին աչքերից արտասուքի վոխարէն, կարծես, աղբիւր էր հոսեցնում։

Նա այժմ ուղղակի դողդողում է, ձեռնափայտը ժամացուցի ճօճանակի նման ձեռքումն աջ ու ձախ է տարուբերուում։

Սեղբոս աղէն վախեցաւ Փալչիկճեանի վայր ընկնելուց, շտապով յառաջ շարժուեց, որ ձեռքը բռնի, բայց Պատուելին ժամանակ չըտուեց, ծնկի վերայ եկաւ և Գաւազանի ոտքը սլինդ գրկեց։

—Ոտքդ պագնե՛մ, Սեղբոս աղա, ողորմած Տէր, խնայիր չորս տարուան հոգածութիւնս, զաւակիդ կորստեան պատճառը մի լինիր, թախանձում էր Փալչիկճեանը։

—Ի՞նչ է, Պատուելի, բացատրի մաքինդ, ոչինչ չեմ հասկանում, գոչեց Սեղբոսը, բարձրացնելով վարժապետին։

—Իրաւ վճռիր էք, հարցրեց Փալչիկճեանը։

—Ի՞նչ։

—Իրաւ է, որ իմին հոգեւնուդ Ղուկիանոսին որոշած էք ձգել անաստուած անհաւատի կորըստեան բաւիղը։

—Չեմ հասկանում, Պատուելի, խօսքերդ։

—Կասեմ՝ Ղուկիանոսիս ազգավնաս Խրիմեանի դալրո՞ցը սլիտի ուղարկէք։

—Մ՛թթէ քեզ մօտ և քո խորհրդատուութեամբն ու քաջալերութեամբը չը վճռուեց այդ խնդիրը։

—Ուրեմն դու ամենէն քարասիրտ ծնողն ես, որ հարազատ մոլորեցուցիչ հերիսիկոսին կըյանձնես։

—Ո՞վ է մոլորեցուցիչն ու հերիսիկոսը, Խրիմեա՞նը։

—Հապա ինչ կարծեցիր։

—Ի՞նչ ես ասում, պատուելի, դու չէիր որ Մ. էփէնդու ներկայութեամբը Խրիմեանին հայրենեաց վրկիչ անուանեցիր, դու չէիր, որ նորա առաքինութիւնը հրեշտակներից վեր դասեցիր, դու չէիր պարծենում, թէ Խրիմեանը քո ձեռնասուն աշակերտն է, դու չէիր, որ խնդրում էիր ինձ ու Սարգիս աղային, որ Մ. էփէնդու առաջարկութիւնն անպատճառ կատարենք։

—Այո՛, այո՛, բայց...

—Ի՞նչ բայց, մենք աւելի քո խօսքերից, քան թէ Մ. էփէնդու յորդորանքից համոզուեցինք։

—Վա՛յ ինձ, վա՛յ հոգուս, „Հարկ է գալ գայթակղութեան, ասաց Յիսուս, բայց վա՛յ մարդոյն, յոյր ձեռն գայցէ, լաւ էր նմա՝ եթէ կախէցեր երկան իշոյ ընդ պարանոցն և արկանէցեր ի ջուր“։ Ուրեմն ես եմ արժանի ջրախեղդ կորսուելու։

—Ջարմանում եմ, Պատուելի, ի սէր Աստուծոյ, հանիր ինձ այս տարակուսանքից, անցեալ օրուան, ասածներդ այս աւուր գործողութեանդ չեն համաձայնուում։

—Այո՛, այո՛, ես սևերես մեղաւոր եմ, Սեղբոս աղա, կըխոստովանիմ յանցանքս, ստկայն ասա, այլասէս ինչ կը համարձակէի գործել, ինչ ձև խօսելու էի Մ. էփէնդու նման լիազօրին ներկայութեամբ. մ՛թթէ դու ինքդ մի վայրկեան առաջ չասացիր, որ Մ. էփէնդին մեծ Եպարքոսին աջ աչքն է, դու չէիր, որ մինչև կեղծաւորութիւն հաճոյախօսութիւն կանէիր. իմին նման չնչին մուկը առիւծ Մ. էփէնդու առջև այլ ևս ինչ լեզու պիտի գործ դնէի. մի կշտամբեր զիս, Սեղբոս աղա, դերայարգի Մ. էփէնդին այսօր պատրիարքարանի կողմանէ եկեղեցեաց և դպրոցաց ընդհանուր տեսուչ է կարգած, եթէ կամենայ մի կաթիլ ջրի նման զիս կը գոլորշիացնէ հողագնդէս. Մ. էփէնդին ոչ միայն իմին պէս ապիկարներուն ահարկու է, խօսքը հրամանքիդ մօտ գաղտնիք մնայ, մեր գթառատ և բարեպաշտօն Զէլէպեան չօրբաչի Սարգիս աղան, որ այս աստուածապահ քաղաքի առաջին ականաւոր և ազգասէր հայն է (ի հարկէ քեզնէ աղեկ չէ եա՛), երեկ կը խնկարկէր զՄ. էփէնդին և կը ճկէր ու կը խոնարհէր նորա մեծափառութեան առջև. ինչ առիթէ դրդեալ, գիտէք.—ըստ որում Սարգիս աղան եկեղեցական է, իւր ձեռքին է տեղիս ազգային անտուկը և պարտաւոր է հաշիւ ներկայացնել Մ. էփէնդիին։ Ի՞նչ ընելու է, բարերարդ իմ, Սեղբոս՝ աղա. «վանն մեղայ իւրեանց խոնարհ եղեն յոյժ», կը գրէ սուրբ գիրքը։ Եթէ մեծարգի Սարգիս աղան Մ. էփէնդիին պատշաճաւոր յարգանքը չըմատուցանէ, նա հաշուետեսութիւնն անաչառութեան կը կալէ և շատ պզտոյ չրերը կը սլարզին. ինքս ևս նոյնպէս. եթէ ոզնիի նման չը կծկուիմ, չը շողոքորթեմ, համայն տաճկահայոց մէջ անօթի կը մեռնիմ։

—Տեսա՞ր, Մ. էփէնդին այնքան ազնիւ գտնուեց, որ քեզ իրաւունք տուեց վարժոդ շարունակելու, միայն թէ իւր նոր հաստատութիւնք դպրոցին ձեռնձիգ չըլինիս։

—Ի՞նչ կը կարծես, տէր իմ, Մ. էփէնդին այդ

աստիճան գիտասիրտ կը գտնուէր, եթէ իւր գովասանած ազգակրօճան, Հայու հաւատին թշնամի, անարժան վարդապետին համար աննպատակ վկայ էի։

—Եւ մ՛թէ այդչափ վնասակար մարդ է Խրիմեանը, Պատուելի՛, հարցուց Սեզրոսը, ես այդ վարդապետի մասին ամէն բերանից գովութիւն եմ միայն լսել։

—Կ՛աղաչեմ, Սեզրոս աղա՛յ, ոտքդ կը լիզեմ, խոստովանահայր եղիր, Թող ամէն լսածներդ օրհնեալ յարկիդ չորս պատերէն դուրս չելլեն. եթէ որդուդ բարիքն ինձի չըթելադրէին, գաղտնիքներս չէի մերկանար, բայց այժմ անհրաժեշտ հարկէ ըստիպեալ՝ ճշմարտութիւնը պարզել ոչ ամօթ համարիմ, ընչու որ՝ զաւակիդ վերայ չանք դրած եմ, քրտինք թափած եմ։

—Հաւատարիմ եմ անկեղծութեանդ, Պատուելի և կը խոստանամ գաղտնապահ լինել, պատմիր այդ Խրիմեանի մասին բոլոր գիտեցածդ։

—Ի՞նչ պատմեմ, չա՛նմ, ոչ Աստուած ունի, ոչ հաւատք ունի, ոչ բարեպաշտութիւն ունի, խռովարարին մէկն է, որդիքը կըստահակնցնէ ծնողաց դէմ, թեթևամիտ երիտասարդները կը գրգռէ բարեխնամ Տաճկի կառավարութեան դէմ, պահք խախտողին Թողութիւն կը խոստանայ՝ միայն թէ իւր Թիւր Հասկացողութեան համեմատ՝ իրը ազգասէր լինի. Խրիմեանի լեզուով ազգասէր նա է, ով Թողած ճարտասանութիւնը, տրամաբանութիւնն և աստուածաբանութիւնը՝ կուսանի և կուսուհիներ բնագիտութիւն, բնախօսութիւն, աստղաբաշխութիւն և նորելուկ, բազմատեսակ, հոգեկորոյս ուսմունքները. իւր աշակերտներէն կորզեր է Սաղմոս, Ժամագիրք, Նարեկացի և աշխարհիկ լեզուաւ վնասակար գիւրըմբռնելի գրքեր է տուեր. Քրիստոս կասէ. „որ սուր առցէ, սրով մեռցի“, այդ անխիղճը Քրիստոսի հակառակ սուր առնել կըքարոզ է. առաքեալը մարմնաւոր տէրերուն հնազանդութիւն կըպատուիրէ, այդ պատուիրանազանցը Թերուս համբակներու սրտերուն մէջ տիրատեցութիւն կըսերմանէ։ Ես սուտ չէի ասեր, որ Խրիմեանն իմ աշակերտ էր. ես ինչ գիտնամ, Թէ սատանայի սերունդին մէջ ինչ չարութիւններ են բունած, վարդապետ էր՝ որ օրին մէկը դուրս բաղխեց։ Ելայ, իբրև սրբասնեալ կրօնաւորի ընդունեցի և կամեցայ աջը համբուրել. օձեալ Տեառն էր, մերին պարարքն էր. բարեբաղդ էի, որ Թոյլ չըտուեց իւր անարժան ձեռքին մաքուր շրբութունքս մօտեցնելու, և գիմեց ինձի, որ իրեն իրաւունք տամ քովս չաճախել՝ Կովդինի տրամաբանութեան չորս հատորն ուսանելու և հոգեշահ խրատներէս օգտուելու։ Մեղմ՛ Տեառն, ասացի՝ հա՛յր սուրբ, ես անարժան եմ այդ շնորհացը, ազգիս վերջին հոգևորականին սաքը մեր գլխէն վեր է, ինձ է անկ քեզնէ խրատ առնել։—Չէ, ասաւ Յիսուսի խօսքերով, «Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն»։ Ի՞նչ ընելու էի, կամայ ակամայ համաձայնութիւն յայտնեցի և խոստացայ ինքս իւր ոտքը դնալ, որ և կըկատարէի։ Քանիցս մօտն եղայ։

—Լսեցի՛, Մ. էֆէնդին ասաց, որ Խրիմեանն երբ քո փիճած գաղափարներդ ստուգել է, երբ տեսել է՝ որ դու յամառի մէկն ես, նոր ուսում և գիտութիւն ստում ես. Տաճիկների ոտքը լիզում ես, լրտեսութիւն ես անում, այս ու այն Տաճկի դըռներումը գիշեր ժամանակները քարշ ես գալիս, այն օրից նա քեզ բացէ ի բաց արգելել է իւր մօտ գալը և ամէնքին պատմել է քո ինչ լինելդ, որով և ծաղրատեղ ես դարձել Պօլսումն ու փախել։

—Կըտեսնեմ աներաւը, իւր ստորաքարշութիւններով պարծեցեր է եղեր, հապա ի՞նչ ընելու էի, իմ տէրս դաւաճանէ՞, այսօր ամենքնիս Օսմանցիին հացը կուտենք, ելնենք Իսլամին խե՞թ նայինք. այո՛, չեմ ժխտեր, ես ևս ի վրէժ ինքեան՝ օրին մէկը Խրիմեանին քարոզները եկեղեցու մէջ ծածուկ գրի առի և Թարգմանաբար ոսոխականաուղը ներկայացուցի. պէտք է ուղիղը խոստովանել, ես միայն չէի, ինձի հետ այս գործում համակից էին -մի վեղարաւոր և երկու աշխարհական։

—Ուրեմն, Պատուելի՛, քո խորհուրդներդ անկեղծ չեն կարող լինել, դու Խրիմեանի հետ անձնական հաշիւ ունիս, սարդ ասեմ, այս անգամ ես քեզ լսելու չեմ, տղան իւր նշանածին շատ մօտ է, պսակաժամը երեք տարի է որոշուել, հարկաւոր է գայԹակղութեան պատճառները մէջտեղից բառնալ. Մ. էֆէնդու ասելութեամբ, Վարագն ամենից յարմար տեղն է, և ես Մ. էֆէնդիի խորհուրդն աւելի եմ գնահատում, քան Թէ քո բամբասանքներդ։ Վճռուած է, վաղը տղային ճամփելու ենք Վարագ. այդ է և իմ խնամի Սարգիս աղայի կամքը։

—Ուրեմն իմ կողմանէ ևս որոշուած է՝ այս գիշեր ձեր քաղաքէն ինձ կը մնայ անհետ կորսուիլ, ցանկամ ձեզ ամենայն բարիք՝ ասաց Փալչիկճեան՝ և աչքերը սրբելով՝ դողդոջուն քայլերով դէպի դուռն ուղղուեց։

—Ընչո՞ւ այդպէս յուսահատ ես, Պատուելի՛, յառաջը կտրեց Գաւազեանը։

—Որովհետև աներկմիտ եմ, որ վաղն իսկ Մ. էֆէնդին Տէրութեան գաբթիին (ոստիկան) մտրակուն ինձ քաղաքէս պիտի արտաքսէ. նա Խրիմեանին մտերիմ աշակերտներէն է, իսկ դուք իմ անկեղծ խոստովանութիւնս նորան կը յայտնէք։

—Այժմ՝ ես իմ պատուով եմ երդում, Պատուելի՛, որ քո ատած մարդին ինքս էլ ատում եմ, և եթէ տղայիս ուղարկում եմ՝ ինչպէս ասացի՝ Մ.

Վիմ. Մեսրոբով

Ներսես Ե. կաթողիկոս ամենայն Հայոց

Վախճ. 1857 թ. 13-ի փետրուարի

էֆէնդիի կամքը հաճելու համար է։ Խրիմեանն երբէք չէ կարող մեր դասակարգի մարդկանցը դուր գալ, նրա կուսակիցներն են՝ անհեռատես երիտասարդները, անփորձ պատանիներն և կամ խորամանկ խաբեբաները. վերին երկու կարգը գրաւուած են նրա փքուն բառերից եւ ճարտասան լեզուից, իսկ վերջիններն օգտւում են նորա դիւրահաւան բնաւորութիւնից, Խրիմեանի անունով իւրեանց քսակները են ծանրացնում։

—Ըսել է՝ թէ ես ինչ ընելու եմ, ողորմած Տէր իմ։

—Դու գնա և ապահով քնիր, դու այս քաղաքի մշտական վարժապետն ես՝ քանի ես և Սարգիս աղան օդ ենք շնչում, իսկ իմ որդուս մասին անհոգ եղիր, ես իմ զաւակիս հինգ մատիս պէս եմ ճանաչում, նա եթէ իմ որդին է՝ երեք չէ՝ 13 տարի էլ որ մնայ Խրիմեանի մօտ, չի խմորուիլ և մոլորուիլ։

Պատուելին անընդհատ երկրպագութիւններ կրկնելով՝ յետ յետ գնաց, հասաւ դրանը, դուռը բացեց և մթութեան մէջ անհետացաւ։

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

[Կը շարունակուի]

ՔԵԶ ՀԱՍԱՑԻ՞...

Քեզ հասացի՞ կանգնի զարուն,
Կը թառամին ծաղիկները,
Եւ դու խաչատ կը մոռանաս
Կեանքով շնչած այն օրեր...

Քեզ հասացի՞ երբ դաղարի
Յոխորջալուց առուակը,
Սառոյցն ամուր կը կաշկանդէ
Վաւաշած սրտի կրակը:

Քեզ հասացի՞ կրգայ ձմեռ
Եւ սոխակի դայլայլիկ
Ընդ լսելին չի հրապուրիլ,
Կրգայ կեանքի արհաւիրք:

Եւ սառնութեան անհոգ վերմակ
Կը պաշարէ քո յոյսերը,
Քեզ հասացի՞ կը մոռանաս
Արցունք ու վիշտ—կեանքի սէր...

Եւ երգերը ու մեղեդիք
Քեզ հասացի՞ հրապուրանք
Կանցնեն՝ երբ որ ծովն ու երկինք
Կը տարածուին միութեամբ:

Ց. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՓՐԷՍՓ

(Ֆրանսերէնից)

«Աշխատում էի, պատասխանեցի ես. յետոյ, չգիտէի թէ Անգլիայում քաղաքավարութեանը պատշաճ լինէր՝ հրաւիրել մէկին սպասաւորի բերանով։ Այս խօսքերի վրայ մի թեթեւ կարմրութիւն ծածկեց նրա երեսը։ Ա՛, ներեցէք վրաբերեց նա, կարուկ կերպով, երբէք չեմ մտածել որ և է անքաղաքավարութիւն անել ձեզ՝ դիտմամբ։ Կարծում էի թէ ձանձրացած կը լինէք ձեր մենակերպ առանձնութիւնից։ Մենք մեռնում ենք տաղտկութիւնից, չընայած որ վովոնութեան համար, ամենայն ուրախ օրը մխանգամ կարգաւ հիւրեր եմ կանչում։ Իսկ այժմ, կը ձաշէք մեզ հետ, եթէ ձեզ չնդրեմ»։ Ի՞նչ կարող էի ասել։ Ճշմարտութիւնը. ոչ իսկ Ճշմարտութիւնն այն է, որ ես զգեստ չունեմ, ոչ իսկ ամենահասարակ զարդը։ Ամանք իրանց պատուի համար չէին անիլ այս խոստովանանքը, բայց իմ վոյթս չէր։ Ուրեմն լինչու, կրկնեց նա զարմացմամբ, չէք հեռագրում որ ուղարկեն ձեզ ձեր զգեստը։ Ձեր սենեկապանը կարող էր Հռոմից ուղարկել։ Ը կատրում եմ ձեզ նախասենեակներում։ Երբ աշխատանքս վերջանայ, ձեր ազատ կամքի գործը կը լինի վարձահատոյց լինել ինձ այն չափով, որ դուք և ձեր բարեկամներն արժան սիրի դատէք, իսկ եթէ ընդհակառակն գոհ չըլինիք, ես ոչինչ վարձք չեմ պահանջիլ, ես միշտ պարտական սիրտ մնամ ձեզ՝ վախարէն հաճելի աշխատութեամբ լի մէկ տարբեայ, որ անցկացրած կըլինեմ ձեր չարկի տակ ամենօրեայ ապրուստի մտատանջ հոգսերից ազատած։ Երբև պատասխան՝ Լէդի Շարտըբէսը բաւական համարեց ինձ բարեւել և հեռացաւ ամենաչնորհալից կերպով։ Աներկրայ եմ, արդարև, որ գեղեցիկ դերն այդ խոսակցութեան մէջ ինձ ընկաւ, որը փոքր յաղթութիւն չէր մի անզգետ մարդու համար։ Երբէք, մինչև այդ վայրկեանը, Լէդի Շարտըբէսը չէր երևակայած որ կարող է աշխատիմ գտնել մէկը առանց սենեկապանի և զգեստի։ Ապահով որ նա էլ այսուհետև չի կարող ինձ չնորհել Լօնդոնի, Պարիզի կամ Վիէննայի որև է մի մատակարարչի հետ։ Սրանք այդ կէտում կարօտութիւն չեն զգում։

Իսկ ինչ կը վերաբերի ինձ, իմ ամարտին մեռաքսեայ՝ կամ ձմեռա-

չեն Թուխ Թաւչեայ պարեգօտը բաւական են լենձ համար։ Երանի՛ Թէ Նրանք մշտապէս պիմանալու հաճելի պիջոդութիւնն անէին լենձ։

Ղէդի Հէռիհն Ղատրօպ առ Լոյն Ղէդի Դօբօտէյ Ղատրօպ, մննատանում, Զիատէրֆիլդի մօտ.

Սիրելի Դօլլի, այստեղ մէկը կայ՝ հազուագիւտ գեղեցկութեամբ, մի հրռոմայեցի. Էսմէն Նրան բերել է աւել հանդէսի դահլիճը նկարելու համար։ Դուք Նրա Նմանը ոչ մի տեղ չէք տեսել. կարծես Թէ մի պատկեր է՝ լջած լը շրջանակից, լինչպէս է եղել, որ մենք ամբողջ ձմեռը անց ենք կացրել Հռոմում, առանց սրբան տեսած լինելու։ Նա խիստ անընտել է, հէնց այդ պատճառով էլ աւելի հրապուրիչ է. բոլորովին միայնակ կողմնում է հանդէսի դահլիճումը, որը Նա նկարագրդում է փըխքնեբով։ Երբ մեզ պատահում է տեսնել Նրան անտառում կամ մի ուրիշ տեղ, Նա բարևում է մեզ և անմիջապէս փախչում մեզանից՝ իբրև Թէ մենք վայրենի անասուններ լինէինք Նրա համար։ Իմ խնդրանօք անցեալ երեկոյ Էսմէն որոշեց հրաւիրել Նրան, բայց Նա չուզեց գալ։ Այս արդէն չափազանց է։ Թաբբին յանդիմանում է մեզ, որպէս Թէ մենք շատ արամադրութիւն ունենք վարուել Նրա հետ լինչպէս մի չէնտըլմանի հետ. Նա արդարև այդպիսի մէկն է. Թողայդ, մինչ դերասանները և արուեստագէտները ամեն տեղ ընդունած չեն այժմ. վերջին չարաթը Նրանցից երկուսը կային դուքսի մօտ։ Այժմ այստեղ անասնելի ձանձրութիւն է տիրում. դորա գլխաւորը պատճառը Թաբբինի Ներկայութիւնն է, որը մի չափից դուրս անհանդուրժելի պառաւ կատու է. իսկ Էսմէն ընդհակառակը լինքնին սիրելութիւնն է։ Ա՛հ, որքան կուզէի որ դուք գայիք։ Շուտով այստեղ սպասում են Հանրի Հօլլհսին, Նա շատ հանճարեղ մարդ է, բայց վոտքը լինչ կծու։ Երէկ երեկոյ, երբ հռոմայեցին մեզ ժեց պատրաստել մեզ իր ընկերութեամբ, Էսմէն հրամայեց պատրաստել Թէյը հանդէսի դահլիճում ժամի չորսին, այս կերպով Նա չըկարողացաւ փախչել մեզ ձեռքից։ Զարմանալի գրաւիչ էր Նա՝ պատմելով մեզ զարմանալի պատմութիւնները և երգելով իտալական երգերը, որոնք յիշեցրին լենձ մեզ Նէապօլսում լսած երգերը մանդօլինի դաշնակցութեամբ։ Յիշում էք։ Թող այդ, Նա Նկարեց մեր ուրուագրերը և ընծայեց մեզ. ես Նախամեծար կը համարէի որ լմս պահէր իր մօտ. բայց յոյս ունիմ որ Նա՝ եԹէ ուզենայ, լոկ յիշողութեամբ կը կարողանայ Նորը ուրուագրել։ Ես, որ կարծում էի մինչև օրս Թէ իտալացիք շատ կընահանջեն, տեսնում եմ որ ամենևին այդպէս չեն, սա մանաւանդ։ Նա համարձակեցաւ ասել մեզ լինչ լինչ ճշմարտութիւնները, որոնք կատաղեցրին Էսմէնին։ Նա այստեղ մնալու է մէկ տարի, և բոլորովին առանձնացած կը մնայ այս ձմեռ, բայց ձմեռը շատ հեռու է։ Էսմէն կը գնայ Փան, ուր կուզևորվի իր Գլօկիւս անուն եղբօրով եԹէ հրաւիրէ լենձ ուղեկցել լրբեն, կընդունեմ։

Ղէօն բէնցօ առ Դօն Էշէվերիս.

Օրերն յաջորդում են իրար և միահեղ են, սիրելի և աղնիւ բարեկամս, աշխատանքս յառաջանում է միայն այնքան՝ որքան Թոյլ է տալիս աննհատատ եղանակը, վեց կարդօն միայն պատրաստ ունիմ՝ իսկ միւս տասերկուսն դեռ չեն կերպաւորուած։ Աչերս փակելիս մարքիս Ներկայանում է մեր փոքրիկ գիւղը իր կաղնիի և շագանակենիի անտառներովը, իր մոխրագոյն մարմարիոնէ ժայռերով և կարմիր ծերանաքարերով, և իր բակլաներովը, որոնք բուսնում են խիստ խնամքի շնորհիւ մեր քարաժայռերի վրայ։ Տեսնում եմ մեր գեղեցիկ, Թևագոյն և քաջակազմ օրիորդները, կուրծքերը շնչասպառ լրանց նրբաՀետ շանջանոցների տակ, կրելով գլխներին կաւեայ կժերը։ Սիրայր մարքիս հետ միաբան սլանում է դէպի ձեզ։ Ա՜հ, որքան կուզէի ձեր կողքին նստած լինել այժմ ձեր ցուեկին տակ. մեծ կարմրածառերի մօտ, գիշերը վրայ գալիս, այնքան կապտագոյն, այնքան արծաԹափայլ, այնքան պարզ, այնքան լուսաշող գիշերին, երբ լուսատանձիկները վայլում են որպէս աստղիկները կազամբի և գմբեթ տերևների վրայ։ ԵԹէ ես այնքան գրամ ունենայի ապրելու համար, առանց ձեզ ծանրութիւն պատճառելու, չիմարութիւն չէի անել՝ Թողնել մեր սիրուն և խաղաղ լեռները։ Ինձ շրջապատող շուայլ ճոխութիւնը սկսում է տաղտկացնել լինձ. գորգերը որոնք հեղձուցացանում են —ամենայն ձայն. անԹիւ, ծառաներն՝ որոնք պատրաստ են կատարել ձեր ամենայն ցանկութիւնները, անվերջ հացկերոյԹները, որոնք պահանջում են հրէշաւոր ախորժակ, յարատև տեսարանը այսքան անգործ մարդոց, որոնք մինչ մեւնոյնը և որոնք անդադար յաջորդում են միմեանց, որովհետև սովորութիւնը իր մեկենասութիւնը պարտադիր է առնում իր հաւատարիմներին, այս բոլորը գրգռում են ջղերս։ Ի զուր է փակում մարդ իր սենեակում, և այդպէս Նա ազատ չէ ենԹարկուելուց այն մինչդոլ ազդեցութեան, որի մէջ գանուում է։

ՕՐ. Ս. Ն.

(Կը շարունակուի)

ԲԱՐՈՑԱԴԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱԿՆԱՐԿՆԵՐ.

Բ. *Խնդիր կամ խղճմտանք.*

Խղճմտանքը մեր մարքի այն կարողութիւնն է, որով Թէ առ Աստուած և Թէ առ մարդս արած գործերնուս բարոյական արժէքը կ'որոշենք. Նա է, որ մեզ յայտնում է Թէ այս բանը բարի է և միւսը՝ չար։ Սինեզոյն վէհանն ենք տալիս Թէ մեր և Թէ ուրիշների արած գործերի համար. այդ պատճառով ասում ենք. խղճմտանքը մարքի այն կարողութիւնն է, որով բարոյական գործողութեան բարի եւ չար յատկութիւնն ենք որոշում։ Նոյն կարողութիւնն է, որ մեզ ստիպում է գործել բարին և զգուշանալ չարից։ Այդ գործողութեան մի կերպովը հաճութիւն ենք զգում, միւսովը՝ տհաճութիւն. միովը՝ ուրախութիւն, միւսովը՝ արտմութիւն։ Մի որ և է գործ կատարելուց յետոյ ունեցած զգացումնիս քննելով, կիմանում ենք Թէ խղճմտանքը մեզ ինչ է խրատում։

Խղճմտանքը գոյացնելու համար պէտք է գործել բարին ու չարը կամ լաւն ու վատը ջանանք որոշել ու դատել։ Ոչխարի ստէպ կատարենք այդ վարժութիւնը, այնպէս դիւրաւ և ուղիղ դատել կըսովորենք։

Կրթութեան գործի մէջ այդ գործողութիւնը մեծ նշանակութիւն ունի։

Բարի գործերով, ազնիւ օրինակնե

Մ. Մնասյան

բով և առաքինի մարդոց գործերը կարդալով, մանաւանդ ս. Գիրքը մեծաւուրեամբ ուսանելով, մարդուս լոյսմամանքը զօրանում ու զարգանում է. սորա հակառակ՝ մեր լոյսմամանքը սկսրանում է. 1) եթէ մեր գործերն բարոյական յատկութիւնների քննելը զանց առնենք, եթէ առանց բարին ու չարը քննելու սկսած գործը կատարենք, եթէ անհոգ լինենք դէպի լաւն ու վատը.

2, եթէ ստէպ չար բաներ տեսնենք, լսենք և մտքներուս մէջ չար խորհուրդները տեղ տանք,

Խղճի ձայնը կը զօրանայ կամ կը սկսրանայ գործածութեան համեմատ։ Նա՝ որ խղճի ձայնին ականջ կը դնէ, սակաւ կը սխալի. սորա հակառակ խղճի ձայնին ականջ չդնողը՝ սուտ կը խօսի, կը նաբէ, սուտ կը վկայէ և վերջ ի վերջոյ՝ կը սկսրանայ իր մէջ ունեցած ընդհմութիւնը սուտեան և անարդարութեան դէմ, ու շատ է, եթէ վերջապէս համաբաճակ ստախօս, գող և անամօթ նաբեայ չդառնայ։

3) Քրիստոնէական առաքինութիւններով սնուած, զօրացած ու զարգացած խղճմտանքը գերագոյն երջանկութեան աղբիւրն է։ Այդպիսի խղճմտանքի տէր մարդկի մէջ բարի և մարդասէր են լինում և բարեգործ։ Ասացինք որ բարեգործութեան համեմատ է լինում խղճի զարգացումն. այսինքն որչափ յաճախ գործենք բարին, այնչափ ևս աւելի կը զօրանայ խղճմտանքը, այնչափ էլ դիւրաւ կը գործենք բարին և աւելի առատ կը վայելենք երջանկութիւնը։ Այն մարդկի՝ որ քիչ անգամ են բարիք գործել, գրեթէ սոսկութեամբ են գործում, ինչ էլ որ գործում են իրրև բարիք, և միտքնակ երջանկութեան՝ ապերջանկութեան զգացումն են ստանում բարին գործելուց յետոյ։

Մարդասէր անձինք ուրիշներին երջանկացնելով, իրանք ևս երջանկութիւն են վայելում։

Յանդուգն գործերը և խօսքերը ստէպ կրկնելով, խղճմտանքը սկսրանում է, թմրում է և այլ ևս չի գործում, այդ դէպքում մարդկի առանց խղճի խայթ և անհանգստութիւն զգալու, գործում են չարիք։ Թէպէտև դժուար, բայց անհնարին չէ թմրած խղճը կազդուրել և մեռածը՝ կենդանացնել։ Բարի խօսքը, բարի գործը և բարի օրինակն է թմրած ու մեռած խղճի կազդուրման և կենդանութեան ճարը։

Անչափահասների խղճմտանքի դաստիարակութիւնը կը վերաբերի ծնողներին և դաստիարակիներին, չափահասներինը՝ իրանց՝ և դաստիարակութեան։

Վայ այն դաստիարակութեան, որ թոյլ է տալիս իւր անգամներին բռնակալել մեռնելու, որ անտարբեր է դէպի իւր ամբողջութիւնը կազմող անհատների բարոյականը։

Աղքատութիւնը, անգործութիւնը, անկարեկցութիւնը, կոպտութիւնը և բռնակալութիւնը մի կողմից, խմոգեմութիւնը և անբարոյական կեանքավարութիւնը մեւս կողմից՝ կարող են անհատների մէջ և նոյն իսկ հասարակութեան մէջ, խղճմտանքի բթութեան, թմրութեան և մահուան իսկ պատճառ լինել։ Խղճմտանքը մեռցած անհատն ու ընկերութիւնը հասարակութեան և մարդկութեան համար չարագոյն աղէտների արտադրիչներն են։

Այս բոլորն լմանալուց յետոյ որչափ մեծ խնամքով պիտի վերաբերուինք խղճմտանքի կրթութեան գործին։

*

Երբ խղճմտանքի ուսման այդ գլուխը համառօտեցինք, քանի մի ուրիշ վարտեր մնաս եկան, որոնց բացատրութեան համար տակաւին գնալ բարեկամիս մօտ։ Եւ նախ այս հարցին.—Վարժապետ, ասացէք լինի խղճը լեմ. մարդս վստահ է թէ բարի գործ՝ երբ որ խղճմտանքն իրան չի յանդիմանում։—Ո՛չ, սիրելիս. շատերը կան որ՝ այս լինչ չար գործերը գործելեն և ամենևին խղճի խայթ և յանդիմանութիւն չզգալեն, մինչդեռ նոյն գործերը եթէ ուրիշներ անէին, իրանց յանցաւոր պիտի համարէին։—Ուրեմն այդ ինչպէս պիտի մեկնուի, պարոն վարժապետ։—Այդ ևս ձեզ սկզբունքով պիտի մեկնել, որ արդէն ասացինք թէ խղճմտանքը կարող է հետզհետէ զարգանալով մեռնել, եթէ նորա ձայնին ականջ չդնենք։ Անբարոյական սկզբունքներով, խօսք ու զրոյցներով



Մ. Մահակ

սովորութիւններով և ւէնակութիւններով մեռնում է բնապարզև խղճմտանքը և նորա փոխարէն ծնւում և սնւում է անհատի և հասարակութեան մէջ մի այլ լուծմունք, որ ընդհանրապէս ճաշակի և գիտութեան լուսով զարգացած մարդկութեան խղճմտանքի ճիշդ հակապատկերն է լինում։ Այն խղճմտանքը մեր ճանաչած խղճմտանքի հակապատկերը լինելով, նորա թեւազատած առաքինութիւնը՝ մեզ համար անբարոյականութիւն. նորա հաւանած ընկերական կենցաղավարութիւնը մեզ համար վայրենութիւն են և զզուելի։

Մեր բարոյականութեան լուէարն է Յիսուսը, մեր խղճմտանքը պէտք է կրթուի Յիսուսի քարոզած բարոյականին համեմատ և երբ այդ լուէարը չէ թագաւորողը խղճմտանքի կրթութեան գործում, այն ժամանակ խղճմտանքը կը դառնայ անհատականը, տեղականը, ցեղականը և կունենայ իր յատուկ բարոյականը, որ անշուշտ կը տարբերուի քրիստոնէական բարոյախոտութեան պահանջած խղճմտանքից։ Այդ պատճառով, ինչ որ քրիստոնէական բարոյականով սնուած խղճմտանքն արգելէ գործել, իր հակառակ խղճմտանքը կը յորդորէ գործել։ Բայց, պատուելի վարժապետս, ենդրեմ ասէք, ուրեմն ինչո՞ւ բոլոր քրիստոնեաների խղճմտանքները մեւնոյն սկզբունքները չեն դաւանում, ինչո՞ւ մի քրիստոնէի խղճմտանքը պահանջում է մեւս քրիստոնէի խղճմտանքի հաւանածը. ինչո՞ւ մեւնոյն քրիստոնեայ ընտանիքի անդամների խղճմտանքները զանազանւում են իրարից։ Ինչո՞ւ մեւնոյն դպրոցի մէջ կրթուող մանուկների, պատանիների և երիտասարդների խղճմտանքները մեւնոյն սկզբունքները չեն ընդունում, մեւնոյն գործերը չեն գործում, այլ մեծմեծից զանազանւում են իբր սկզբունքներով և իբր գործերով։

—Սիրելիս, քրիստոնէական խղճմտանքը քրիստոնէական կրթութեան և ընդհանուր գիտութեան արգասիքն ու արդիւնքը պէտք է լինի. քրիստոնէական կրթութեան և ընդհանուր գիտութեան աւանդման կամ մատակարարման մէջ տակաւին կատարեալ համերաշխութիւն չէ կայացել սկզբունքների նկատմամբ. և բացի դրանից, մարդիկ մարմնական կազմուածքով, բնական հաւանութեամբ տարբեր են մեծմեծից. տարբեր են և իրանց մտաւոր կամ հոգևոր կարողութիւնները. սորա համար էլ անկարելի կամ գոնէ շատ և շատ դժուարին է ամենքի խղճմտանքի վերայ մեւնոյն կնիքը դրոշմել, մեւնոյն ազդեցութիւնն անել. քնարհնարաբար մեծմեծանցից պիտի տարբերուին. բայց այդ տարբերութիւնը սկզբանց ըմբռնման տարբերութիւնն է և ոչ թէ հիմնական սկզբունքների տարբերութիւնը։ Այն ոը քրիստոնեան է, որ Յիսուսի քարոզած բարոյական սկզբունքները՝ իրանից առաջ և իրանից յետոյ քարոզուած բարոյական սկզբունքներից վեհագոյնը չը համարի. այն ոը քրիստոնեան է, որ աւանդ մեւացնելու իր խղճն ու բանականութիւնը՝ հեթանոսական, հրէական, մահմեդական և կամ բոլորովին անաստուածութիւնն ու ամենաստուածութիւնը բարձր հայտարի քրիստոնէական աստուածգիտութիւնից։

Ինչ անէնք որ անունով մեւոյն քրիստոնեաները կան, որոնց խղճն ու խղճմտանքը կատարեալ հակապատկերն է այն խղճմտանքի, որ զարգանում է Ճշմարիտ քրիստոնէական կրթութեամբ և հեացնում է մեզ իւր բարոյական բնաւորութեամբը։

Ես նկատեցի որ ուսուցիչ բարեկամս այդ բացատրութիւնները տալիս արդէն յոգնած էր։ Ուստի չուզեցի ուրիշ խնդիրներ ևս յարուցանել, Թողեցի և խորին յարգանօք «մնաս բարեաւն» ասելով, դարձայ իմ սենեակը։

Ս. Ք. ՐԸԳ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

[Կը շարունակուի]

Խմբագրութիւնից

Մեր ժողոված տեղեկութիւններից իմացանք, որ զաւառներում Թիֆլիսից գնացած հրահանգների զօրութեամբ մի խումբ մարդիկ թէ մեր թերթերը եւ թէ ալբէմիաները քաժանորդների հասցէներով ուղարկուած փոս-

տատնից ստանում՝ են եւ իրանց սեպհականում:

Խնդրում ենք մեր քաժանորդներին հսկել եւ եթէ հնարաւոր է, այդպիսիների վարմունքը ոստիկանութեան միջոցով սրբանազրել տալ եւ մեզ ուղարկել: Այս մասին, որքան էլ որ ծախք անելու լինեն մեր քաժանորդները, մենք շնորհակալութեամբ կը հատուցանենք:

Իսկ մեր այն քաժանորդները, որոնց ձեռքը չէ հասել մեր իրանց ուղարկած պրէմիաները, յատուկ խնդրում՝ ենք տեղեկացնել մեզ անյապաղ, որ կըրկին ամենայն ուրախութեամբ կուղարկենք նրանց: Մենք չենք կամենալ, որ մի խումբ սրիկաների շնորհիւ մեր քաժանորդները զրկուին իրանց հասանելի №№-ից եւ պրէմիաներից:

ժամանակագրութիւն

Ս. Էջմիածնից մեզ հեռագրում են, որ ս. Սիմէոնը յարգել է Թիֆլիսի եկեղեցիների ծխականների խնդիրը, կանոնաւոր համարելով Կաթուղիկոսական ընտրութեան համար ծխական պատգամաւորների ընտրութիւնը:

—

Լսւում է որ Հիւսիսային-արքեպիսկոպոս Տէր Խորէն Նար-Բէյ Լուսինեան շուտով պիտի Թողնէ Կ. Պոլիսը և վերջնականապէս պիտի վերադառնայ Պարսից:

—

Ներքին գործերի նախարարութիւնը կարգադրել է որ Էջմիածնի սինոդը պիտի Թէ իր մէջ և Թէ իրանից կախումն ունեցող վարչութիւնների մէջ ծառայել ցանկացողներին ընդունելու համար՝ դիմէ տեղական Նահանգապետին, իմանալու համար Թէ արգելք չկայ արդեօք նրանց ընդունելու:

—

„Մշակին" հաղորդում են Ալէքսանդրօպոլից, որ այնտեղ Երևանի պ. Նահանգապետից Թոյլտուութիւն է ստացել էժանագին գրադարան բանալու:

—

Անդրկովկասեան երկաթուղու ժանդարմական վարչութիւնը ղջաբեբականով յայտնել է գծի վրայ գըտնըղող իր բոլոր ստորադրեալներին, որ երկաթուղու կօնտրօլերները՝ հսկիչները՝ իրաւունք չունին ճանապարհորդներին պահել գծի մեա կայարաններում, եթէ մինչև իսկ նրանք՝ ճանապարհորդները ուշանային լինին առանց տոմսակի:

—

Կիրակի վեցուսրի 9-ին Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան օգտին եղած պարահանդէսը շատ յաջող անցաւ: Մուտք եղել է երկու հազար 500 ր.: Պարահանդէսին ներկայ են եղել պ. կառավարչապետի օգնական կոմս Տատիշչև, հիւպատոսները և ահագին բազմութիւն երկու սեռի հայեր: Պարահանդէսի կառավարչուհին էր տիկին Դ. Ա. Մանթաշեան:

—

Ամսոյս 14-ին քաղաքիս Վանքի Մայր եկեղեցում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս Ե.-րդի մահուան 35 ամեակի առիթով, ներկայութեամբ Ներսէսեան դպրոցի և այլ Հայոց ուսումնարանների աշակերտների, ուսուցիչների: Ապա ամենքը դիմեցին Ներսիսեան դպրոցի դահլիճը, որ լցւել էր անսովոր մեծ բազմութեամբ: Նախ պ. տեսուչը կարդաց դպրոցի տեղեկագիրը և ապա աշակերտներն երգեցին եւրոպական նօտայով „Տէր պահեա" մաղթանքը ու երկու երգ, որից մէկը հանդիսականները կրկնել տւին:

Ձայնագրութիւնն այժմ այդ դրպրոցում սովորեցնում է դպիր Բենգլեան, որ Պետերբուրգի կօնսերւատորիան աւարտել է:

Նրա վրայ շատ յոյս կայ. Թէ կարդացնի արդեօք՝ այդ ապագան ցոյց կըտայ: Վերոյիշեալ մի երկու երգն էլ նա վերջին օրերս էր սովորել այդ հանդէսի համար: Պատարագին դպրոցի սաները երգում են անդրեկավար:

—

Խմբագրութիւնս ուղարկել է Բոգդիւղը (Կումխի գործակալութիւն Վրաստանում) իր յատուկ Թղթակիցը, որպէս զի նա ներկայ լինի կաթուղիկոսական երկու պատգամաւորների վերընտրութեանը: Թեմից առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը այնտեղից ընտրուած երկու պատգամաւորի՝ պ. Նիկ. Տէր-Ղևոնդեանի և պ. Ի. Ղորդանեանի ընտրութիւնը անխուսեր է համարել և ուղարկել է քաղաքից Դիւտ-քահանայ Աղանեանին և պ. Ա. Սպարապետեանին Բօդամ նոր ընտրութիւն անելու:

—

Շուշուց մեզ գրում են, որ Ղարաբաղի լեռնի կողմից պատգամաւոր կամենում են ընտրել պ. Բալա-բէկ Մելիք-Ղարագեօզեանին և դարաբաղցիների կամքն է ս. Լուսաւորչի գահի վրայ բազմած տեսնել կամ Խրիմեան Հայրիկին և կամ սրբազան Ա. Ըիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին:

—

Տ. Դիւտ քահանայ Աղանեանը յայտարարել է, որ հրատարակելու մտադիր է երջանկայիշատակ Սիմէոն կաթուղիկոսի չիշատակարանը:

Ի՞նչ գործ ունի Սիմէօն կաթուղիկոսի չիշատարանը մի մասնաւոր մարդու մօտ, ո՞չ ապաքէն դրա խնդիրը տեղն է ս. Էջմիածնի մատենադարանը: Արդեօք արժանապատիւ հոգևորականը չի վկայում, որ լինքը չի կարող այդ ձեռագրի սեպհականատէրը համարվել:

Արդեօք որդեական պարտք չէր տէր Դիւտի վրայ այդ գիւտը վերադարձնելու Մայր Աթոռին: Ի հարկէ, տէր հայրը անմիջապէս չէ ձեռ բերել այդ հետաքրքրական գործը, մենաք Ս. Էջմիածնի արխիվից: Նա ստացած կը լինի իր մի ծանօթից:

Տէր հայրը լինչպէս գրագէտ, հոգևորական և հարազատ որդի իր Մոր Ս. Էջմիածնի, որի բարիքները շատ է վայելել, լաւ կը լինի որ դարձնի այդ ձեռագիրը, դրանով նա բարի օրինակ տւած կը լինի ուրիշների էլ, որոնք Էջմիածնի ձեռագիրները ունին՝ վերադարձնեն: Յայտնի է, որ հին ժամանակ Էջմիածնի մատենադարանը և Թանգարանը գերի չէին այնձ ձեռնարից: Լաւ չէր լինի արդեօք, որ ամենասպատիւ Տեղապահը տէր Կանգնի Սիմէօն կաթուղիկոսի ձեռագրին և տալ տայ Էջմիածնի տպարանում, քանի որ տէր Դիւտը միջոցներ չունի հրատարակելու:

—

Մեզ գրում են Շամախուց, որ ամեցեալ սեպտեմբերից սկսած ամեն րանական հայերի երկաեռ զարոցը կրօնը դասախօսում է լուսաւորչական քահանայ հայր Աբսէն Բագրատունի Թղթակիցն աւելացնում է, որ ամենհաւանական է, որ շատ չի տևի նրանք բոլորովին կըմիանան եկեղեցուն, որ երբէք

արգ
քոզ
Ա
կան
լենի
քա
իրա
հայ
Փ
ար
քե
ար
Նա
Լա
քե
Թէ
հայ
ար
ար
Ֆ
ար
ար
ար

արգելում սուբը գնդք կարդալ և քարոզիչ ունենալ։

Աւետարանականներն ունին բաւական խոշոր գումար, որով կարելի կը լինի լաւ լուսաւորչական քարոզիչ քահանայ ունենալ, քանի որ այժմ իրանք այդ իրաւունքը չունին, իսկ հայոց եկեղեցին ունի։

—

Փետրուարի 9-ին Թիֆլիսի խորհրդարանի չէնքի մէջ բացւեց քաղաքի քիմիական լաբարատօրիան, որ նպատակ ունի սնունդի պաշարեղէնները վերլուծելով որոշել նրանց օրակը թէ չեն պարունակում իրանց մէջ առողջութեան վնասակար և կեանքին վտանգ սպառնացող վարակիչ տարրեր։ Լաբարատօրիան շատ բաւարար կերպով սարքւած է ամեն հարկաւոր գործիքներով և պարագաներով։ Լաբարատօրիայի կառավարիչ նշանակւած է քաղաքային առողջապահիկ բժիշկ պ. Ա. Վարդանեան, իսկ քիմիկոս՝ պ. Դ. Ալիբէգեան։

Բաղաքագլուխը իր ճառի մէջ ասաց, դուք պիտի աշխատէք նախ և առաջ գրաւել հասարակութեան սէրը և հաւատը, որով միայն կարող է այս խիստ օգտակար հաստատութիւնը առաջ գնալ և իր նպատակին հասնել։

—

Այս օրերս Կովկասեան Թանգարանն են բերւած Բօրչալուի գաւառից վրացերէն արձանագրութիւններով մի քանի քարեր։

—

Міръ Божій պատկերազարդ հանդէսում տպագրւած է Բաֆֆիի Բիբիշարաբանի վէպիկի Թարգմանութիւնը և այդ առթիւ անհանի հեղինակի մասին գրած տիկին Նեկրասօվայի մի յօդւածը։

—

Բագւի մօտի Բալախանի գործարանական աւանի հայ մշակները հաւմար քահանայ է նշանակւել Տէր Մուշեղ Մամիկոնեան, Հին-Նախիջեւանի գաւառի Գոմերվի գիւղացի։

—

Թիֆլիսի առաջին և երկրորդ կարգի վաճառականները իրանց տարեկան ժողովում վճռեցին դիմել պ. Նահանգապետին, որ սա միջնորդէ Ներքին գործերի նախարարին հիմնելու Թիֆլիսում առևտրական և արդիւնաբերական յանձնաժողով։ Յանձնաժողովի գլխաւոր նպատակն է լինել միացնող կենդրոն վաճառականների, որով նրանք միջոց կունենան միասնաբար խորհելու և գործելու երկրի արդիւնաբերական այժերը բարձրացնելու, զարգացնելու։

Երկրորդ՝ Յանձնաժողովը կը ծառայէ որպէս միջնորդ և ներկայացուցիչ վաճառականների, գործարանատէրերի և կառավարութեան մէջ, որ մեծ աջակցութիւն կարող է ցոյց տալ տեղական առևտրականութեան և արդիւնաբերութեան կարիքները ուսումնասիրելու և յայտնագործելու, վիճակագրական տեղեկագիր կազմելու և այլն։

Երրորդ Յանձնաժողովը կլինի մի կենդրոն, որից Ռուսիայի և արտասահմանի վաճառականները կարող են տեղեկութիւններ ստանալ առևտրական պահանջների և գների մասին։ Յանձնաժողովը յարմար է դատել, որ նա գոյութիւն ունենայ Թիֆլիսում, և որ նրա գործունէութեան շրջանից դուրս համարւի Բագւի նահանգը, որի գլխաւոր արդիւնաբերութիւնը՝ նաւթը ունի արդէն իր զարգացման համար հոգացող կանոնաւոր տարեկան ժողովներ, սինդիկատ և այլ օրգաններ։

—

„Արարատ“ ամսագրում կարդում ենք հետեւեալ լուրերը.

—12 Դեկ. Տրւեց Վանական կառավարութեան դեկտեմբերի ծախսուց համար 10000 ր., որ անցեալ 11 ամիսների ծախսի հետ միասին անում է ընդ ամենը 106000 ր.։

—12 Դեկ. Երևանի թեմական տեսչի միջնորդութիւնը յարգելով Սինօդն հրամայեց Երևանի Կոնսիստորիային չըհանել այլ ևս ուսուցիչների ռոճկից 3 տոկոս յօգուտ թեմական Դպրանոցի և քահանաների որդւոց և այրեաց գանձանակի։

—13 Դեկ. Մայր Աթոռի տնտեսական կառավարութիւնը բարւոք դրութեան վերածելու և ամեն տեսակ ծախսերը ճշտելու համար հարկ դատւեց կարգել Սինօդի անդամներից մէկին Վանական Կառավարութեան նախագահ և միանգամայն բոլոր տնտեսական մասի ընդհանուր Տեսուչ, նոյնպէս և վերահսկող թէ Վաղարշապատի և թէ սահմանակից դիւղերի կալւածների արդիւնքին, ուստի հրամայեցին. Սինօդի անդամ գերապատիւ Դրիգորիս եպիսկոպոս Աղանեանցին կարգել Նախագահ Վանական Կառավարութեան և ընդհանուր Տեսուչ՝ Տպարանի, Ձեմարանի, Ագարակի, Մատենի, Հիւրատան և Ս. Աթոռի կալւածների և հրաւիրել Նորին Սրբազնութեանը մուտ գործել իր պաշտօնը վարելու և տալ կարևոր հրահանգներ իւրաքանչիւր մասի պաշտօնեաներին իրանց պարտաւորութիւնները ճշտիւ կատարելու։ Իսկ եթէ սովորականից դուրս մեծաքանակ ծախսեր հարկաւոր լինի անել նորոգութիւնների, չինութիւնների և պ. համար, այդ դէպքերում հարկ է որ Նորին Գերապատւութիւնը դիմէ նախապէս Սինօդի խորհրդակցութեանն ու տնօրինութեանը։ Այս տնօրինութիւնը ծանուցանել Վանական Կառավարութեան, Տպարանական Ժողովին, Ձեմարանի Վարչութեանը, Ագարակի Վերատեսչին, Մատենապետին, Հիւրընկալին և Շտեմարանապետին, պատւէր տալով իւրաքանչիւրին առանց գիտութեան տնտեսական ընդհանուր Վերատեսուչ և Վանական Կառավարութեան Նախագահ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղանեանցի՝ անել և ոչինչ։

—

գեղարուեստ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Անցեալ երկուշաբթի մշտական խումբը ներկայացրեց Դալիլա պիէսը, իսկ հինգշաբթի օրը Վարդանանց տօնին, Ռուբէն պատմական ողբերգութիւնը, որով և փակւեց այս սեզօնի հայ ներկայացումները։

Տարազի առաջնակարգ №№-ում մանրամասն կը խօսենք հայ Թատրոնի մասին։ Առայժմ շնորհակալութիւն ենք անում Թատրոնական Մասնաժողովի եռանդուն անդամներին, պ. Պետրոսեանին այս տարի հայ Թատրոնին նրանց մատուցած ծառայութեան համար։

Խորհուրդ ենք տալիս պարոններին չըվհատիլ և արևելեան առաջ տանել հայ Թատրոնական գործը աջակից առնելով երանց և ուրիշ նոյնպէս եռանդուն, հայ Թատրոնի սիրահար անձնաւորութիւններ։

Հինգշաբթի օրւայ տօնական ներկայացումը կատարեալ մի փառաւոր խնճոյք էր, որին մասնակից էր հայ միջին դասը։ Նրանց ոգևորութիւնը անցել էր սահմանից, բոլորեքեանք հրճւում էին։ Տասն անգամ բեմ կանչեցին խմբի, Մասնաժողովի անդամներին. Թատրոնում սկսել էին Հրազներն հանգցնել, բայց հասարակութիւնը չէր դադարում քաղցր ցոյցեր

անելուց։ Ոսկիհանութեան մեջամբուտութիւնը դադար տուաւ ցոյցերին։

—

Նոյն հինգշաբթի երեկոյեան Արտիստիկ Ընկերութեան Թատրոնական դահլիճում Թիֆլիսում առաջին անգամ հայ լեզուով ներկայացրին ֆաուստ օպերայից մի երկու գործողութիւն և ուրուս լեզուով Մազէպա, Տրաւիատա օպերաններից։ Ներկայ էր Թիֆլիսի հայ լինեալիգենա հասարակութիւնը. մասնակցում էին օր. օր. Գենջեան, Ասլամազեան։ Հայ լեզուով օպերային ներկայացման կարապետները մեզ յոյս են տալիս մօտ ապագայում լսել ամբողջ օպերանները հայ լեզուով։

—

Երէկ, շաբաթ երեկոյեան էլ քաղաքիս ժողովարանում կայացաւ յօգուտ հայ Թատրոնական ֆոնդի վարուսոր պարերեկոյթ։ Ուրախ և զուարթ անցաւ և այս գիշերը։ Մանրամասն հաշիւը հետևեալ շաբաթ։

Թիֆլիսի զարմուհիներին Թիւ չըկայ, ամբողջ ցերեկ և գիշեր ներկայացումներ, նուագահանդէսներ, պարերեկոյթներ են։ Վաղն էլ Կրուժօկում ֆրանսիական կօլօնիալ զգեստաւորուած-հանդէս է յօգուտ Ռուսաստանի սովեալներին և յունուարի 6-ի ադիտեն զոհ գնացած ընտանիքներին։ Ֆրանսիական այս երեկոյթը մեզ ուրախ է անցնում և գեղեցիկ։

—

դրամատնութիւն

Շնորհակալութեամբ առացանք պ. Ա. Ղամալեանի Պատրիկեանի նամակները 1892 տպ. Ռօտինեանի, մաքուր տպագրութիւն, լաւ թղթի վրայ, մեջազիը, 240 երես, գինը 60 կոպ.։

Ուր կայ ընդհանրութիւն, այնտեղ կան տիպեր, այսինքն այնպիսի անհատները, որոնք կրում են ընդհանուրի պատկերը, ներկայացնում են նրա յատկաորոշող գծերը, գաղափարը, նմուշը։

Տիպեր կան բուսական և կենդանական աշխարհում, տիպեր մարդկային հասարակութեան մէջ։

Պատմագիրը կամ վիպագիրը օբենական՝ տասնուերորդ դարու մի հայն կենսագրութիւնն անելով, կարող է այդ դարու ընդհանուր հայութեան՝ ազգի մեծամասնութեան՝ վիճակը մեզ ներկայացնել. այդ դարում հայն է որպէս տիրասէր (հաւատարիմ հըպատակ), ջերմեռանդ (սերտ կապած իր եկեղեցուն), իր խեղճ վիճակից ելք գտնելու ձգտումն յայտնող (տըպագրութիւն, դպրոց—Մխիթար Սեբաստացի, Սիմէօն Կաթողիկոս, Ղազարաքաղ մելիքներ և այլն)։

Ինչքան կեանքը զարգանալու ձգնապարհի վրայ է՝ այնքան հարուստ է նա տիպերով և որչափ կեանքի հոսանքը սրընթաց է կամ յառաջադիմ, այնքան արագ փոխւում են տիպերը և իրար յաջորդում։ Պ. Ա. Նամալեանի զրոյցի ձևով գրած նամակները մեր Անգլոլովկասի հայերի տիպերի մի ուսումնասիրութիւն է՝ վերջած գլխաւորապէս ինտելիգենտ դասակարգը մեր կեանքի վերջին տասնամեայ շրջանում։

Մենք հարկ չենք համարում ուրիշ բան աւելացնել, կամ նկարագրած տիպերի մասին խօսել, մեր պարտքն է միայն մի երկու խօսքով մեր ընթերցողներին ծանօթացնել այդ հետաքրքրական և ախորժ լեզուով գրած գրքի հետ, որ նրանք ձեռք բերեն և կարդան. իրանք ընթերցողները՝ մենք կարծում ենք՝ կարող են հեշտութեամբ նկատողութիւններ անել տիպերի մասին և հեղինակին իսկ իր յառաջաբանի մէջ խնդրում է, որ ընթերցողը իր նկատողութիւնները անէ և հաղորդէ իրան հեղինակին, որ ապագայ նմանօրինակ աշխատութիւնների ժամանակ սատար կարող են լինել։

—

Ստացանք պ. Յ. Դարագեօզեանի լուսանկարներ և կօլմարի դատաւորի տեսիլը թարգմանական փոքրիկ աշխատութիւնն ժողովրդական և աշակերտական ընթերցանութեան համար։ Գրքի հրատարակիչն է պ. Բ. Աբուշանեան. տպւած է Մ. Վարդանեանի տպարանում, 67 երես, մեջադիր, գինն է 20 կ.

պիտանի գիտելիք

Խմելու կաթը չըպէտք է ըևրանը բաց ամանում պահել սննդակում, որովհետև նա խիստ ընդունակ է վարակիչ միկրօրներին օդի մէջից իր ներսն ընդունելու։

—

Կաթ կեղծողները կաթնատներում կամ առանձին վաճառողները խառնում են նրա հետ դաջ, ածխաթթւային սոդա, պօտաշ, սալիցիլի թթւատ եւ այլն, որոնցից մանաւանդ վերջինը մահացու կերպով են ազդում մարդու առողջութեան վրայ։

—

Վէպերի ընթերցումը ամենալաւ միջոցն է մտաւոր յարմարութեան եւ ջղային տկարութեան դէմ։ Անգլիայում վիպագրութիւնը եւ վէպերի ընթերցումը շատ զարգացած է. զարմանալի Ֆրանսիայում վերոյիշեալ հիւանդութիւնները շատ սակաւ են քան օրինակ Ամերիկայում, ուր քամահում են վէպերը. իրր թեթեւ անշահ զբաղմունք։ Լաւ վէպերի ընթերցումը ամրապնդում է մեր մտաւոր կարողութիւնը եւ նեարդային կազմը։

—

Կարտօֆելը փթելուց պահպանելու համար պէտք է նրա վրայ ցանել քարի շերտով աւազ։ Աւազը ոչինչ վատ ազդեցութիւն չի անում նրա համի վրայ եւ պահպանում է նրան բոլորովին անարատ։

օտարերկրեայ լուրեր

Այս տարի լրանում է չոգեկառք հնարելու 75-ամեակը, բայց նրա տւած հսկայական օգուտը երկրագործութեան եւ առեւտրականութեան, նա հզօր կերպով նպաստեց գիտութիւնների զարգացման եւ ընդհանուկ երկրագնդի ազգերի իրար մերձաւորութեան դիւրութեան։

Շոգին ընտանեկութեան քանդեցնելու մասին իր ազդեցութեան քանուրի որ Գէորգ Ստեֆենսոնը, որ 1817 թուին շինեց առաջին շոգեկառքը որ իր ետեւից սանդրեակների վրայով քաշում էր մի քանի ագանքանքով բարձած վագոններ։ Այս նշանաւոր յօբելեանը լուսաւորեալ երկրներում անհետք չի անցնում, այլ յարգւում է զանազան ուրախութիւններով։

—

Ամերիկայում մի ժամանակից ի վեր լսկսել են մահուանարտ յանցաւորներին ելեքտրականութեամբ կենդանի անել։ Այդ մահը կատարելապէս առանց տանջանքների տեղի է ունենում ակնթարթապէս։

—

Եգիպտոսի նոր խեդիվի մասին շատ հետաքրքրելի տեղեկութիւններ են հաղորդում եւրոպական լրագրները։ Վարդութեան մէջ նա շատ սիրալիր եւ քաղաքավար է, ամեն գործում չի կորցնում գիտակցութիւնը եւ մինչեւ լաւ չի ուսումնասիրում եւ քննում մի բան, դատողութիւն կամ վճիռ չէ տալիս։ Նա անդորը է եւ լուրջ. ամենքով հետաքրքրւում է, բայց ինքնահաւատ չէ։

—

Եւրոպական ամենալուրջ քաղաքական լրագրները հաւատացնում են, որ Տէր Լուսինեան Յորէն Նար-Բէյ իշխան Արեւելեան Հայերի վերաբերեալ կարգադրութիւնները ամենախիտ կրիտիկայի են թարկելուն համար է պատճառը։ Պատրիարքի կոնդակը, Նար-Բէյի մեղայական նամակը եւ այլն միայն թատերական գործողութիւններ էին իսկական պատճառները ծանօթ կելու։

Ժողովրդի զայրոյթը Աշղզեանի դէմ բորբոքվին արդարացի է։

—

Գերմանական իշխան Գէորգը յայտնի գործել է, որ գերմանական զօրքի մէջ ամենատարբեր վարմունքներ եւ զազանական խստութիւններ էին տեղի ունենում, որոնք սպանում էին զօրքի մէջ մարդկային արժանաւորութեան զգացմունքը։ Այդ չարիքի պատճառով այժմ սկսած են տախտակամածիններ։

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան։

ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ: Дозв. Ценз. Тифлисъ, 15-го февраля 1892 г. Тип. Ароръ. Т Я. Назарьянъ, Барят. ул.